Find Your Next Level արշավի շրջանակներում խաղարկության իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Find Your Next Level արշավի շրջանակներում խաղարկության (այսուհետ՝ Խաղարկության) իրականացման սույն պայմաններով (այսուհետ՝ Պայմաններ) սահմանվում են խաղարկության անցկացման կարգը, պայմանները, սահմանափակումները։

1.2. Մասնակցելով խաղարկությանը՝ Դուք հաստատում եք, որ ծանոթացել եք Պայմաններին և համաձայն եք դրանց։

1.3. Խաղարկությունը համարվում է մարքեթինքային միջոցառում։

1.4. Խաղարկությունն իրականացվում է «Յուքում» փակ բաժնետիրական ընկերության կողմից (այսուհետ՝ Կազմակերպիչ)։

1.5. Խաղարկության շրջանակում Կազմակերպիչը համագործակցում է՝ ruben_yesayan, ziroyan__, maga_vladmaga, haykfreestyle Instagram-յան ինֆլուենսերների (այսուհետ՝ բոլորը միասին՝ Ինֆլուենսերներ, առանձին՝ Ինֆլուենսեր)հետ։

1.6. Խաղարկությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում։

2. Խաղարկության մասնակիցներ

2.1. Խաղարկությանը կարող են մասնակցել ցանկացած Instagram-յան օգտատեր, ով կկատարի Պայմանների «Խաղարկության անցկացման կարգի» պահանջները։

2.2. Կազմակերպչի աշխատակիցները և նրանց ընտանիքի անդամները չեն կարող մասնակցել Խաղարկությանը։

3. Խաղարկության անցկացման կարգը

3.1. Խաղարկությանը մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև Հուլիսի 21-ը ընկած ժամանակահատվածում ինֆլուենսերի կողմից պահված “Next Level” ամուլետը գտնել և Instagram սոց. ցանցում սթորի բաժնում հրապարակում կատարել նշելով Ինֆլուենսերի և Կազմակերպչի Instagram-յան էջերը։

3.2. Հետևել Ucom-ի և Ինֆլուենսերի էջին։

3.3. Ինֆլուենսերների կողմից պահված “Next Level” ամուլետը գտած և Instagram սոց. ցանցում սթորի բաժնում հրապարակման մեջ ամուլետը թաքցրած Ինֆլուենսերի և Կազմեկերպչի Instagram-յան էջերը նշած 12 օգտատերերը կստանան Պայմանների 5-րդ բաժնում նշված ցանկից մեկական նվերը։

3.4. Նույն օգտատերը չի կարող ստանալ 1-ից ավելի նվեր։

3.5. Հաղթողների ընդհանուր թիվը սահմանվում է 12 հոգի։

3.6. Խաղարկության նվերների տալու օրվա մասին հաղթող օգտատերերը հավելյալ կտեղեկացվեն Կազմակարպչի կողմից անհատական ինստագրամյան նամակներով։

3.7. Խաղարկության հաղթող ճանաչված օգտատերերը իրենց նվերները ստանալու համար պետք է անձամբ մոտենան Կազմակերպչի՝ Հյուսիսային պողոտա 1/2 հասցեում գտնվող հաճախորդների սպասարկման գրասենյակ։

3.8. Հաղթող ճանաչված օգտատերերի կողմից պետք է ներկայացվի իր Instagram-յան

էջին Կազմակերպչի կողմից ուղարկված անհատական ինստագրամյան նամակը և անձը հաստատող փաստաթուղթ։

3.9. Հաղթող ճանաչված օգտատիրոջ կողմից նվերը անձամբ ստանալու անհնարինության դեպքում նվերը կարող է ստանալ վերջինիս կողմից պատշաճ լիազորված անձը՝ օրենքով սահմանված կարգով տրամադրված լիազորագրով և անձը հաստատող փաստաթղթով։

3.10. 18 տարին լրացած օգտատերերը պետք է ուղարկեն իրենց անձնագրերը հետագա վերիֆիկացիայի համար։ Եթե օգտատիրոջ տարիքը 18 տարին լրացած չէ, նա պետք է իր ինստագրամյան էջով ուղարկի իր ծնողի, որդեգրողի կամ խնամակալ 18 տարին լրացած անձի անձնագիր։

3.11. Նվերը ենթակա չէ փոխարինման կամ փոխանակման գումարի հետ։

3.12. Կազմակերպչին իրավունք է վերապահվում փոփոխել Խաղարկության Պայմանները՝ հաշվի առնելով ստեղծված իրադարձությունները՝ դրա մասին նախապես տեղեկացնելով իր պաշտոնական կայքէջում և սոցիալական էջերում։

4. Խաղարկության անցկացման ժամկետները

4.1. Խաղարկությունն անցակցվելու է ինֆլուենսերների հրապարակման օրվանից մեկնարկած մինչև 2024 թվականիհուլիսի 21-ը (ներառյալ) ընկած ժամանակահատվածում:

5. Նվերների ցանկ

5.1. Նվերների ցանկը հետևյալն է.

Ապրանքատեսակ	Քանակ
Անլար ականջակալ JBL Tune 520BT	12 հատ

6. Կազմակերպչի տվյալները

«Յուքոմ» փակ բաժնետիրական ընկերություն
գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Դավիթ Անհաղթի փող., շ. 8/4,
պաշտոնական կայքէջ՝ www.ucom.am
պաշտոնական սոցիալական էջեր՝
https://www.facebook.com/UcomArmenia
https://www.instagram.com/ucom_official
հեռախոսահամար՝ +374 (11) 444 444